

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՊՈՆՄՆԵՐԻ ԲԱՅԱԿԱԶՄԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԻՂԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Հովհ. Շիրազի՝ «Մեր պոեզիայի պառնասի հոյակապ դեմքերից» (Ավ. Իսահակյան) մեկի, պոեմներում գործածվում են հայերենին հատուկ բայական-մական բոլոր տիպերը, որոնցում գերիշխողը համադրական բաղադրյալ ձևերն են՝ հատկապես բայածանցավորները։ Դրանք հետաքրքիր են թե՛ բառակազմական, թե՛ իմաստաբանական և թե՛ քերականական առումներով։

Բայերն արտահայտում են բանաստեղծի հուզառատ ապրումների, խոհերի, ծփացող մտածումների հեղեղվող ելևէջումները, փայլում իրենց բառակազմական թարմությամբ, իմաստային ճոխությամբ, առարկայի և ընթացական հատկանիշի միավորման շոշափելիությամբ։ Ահա, օրինակ՝ «արարաշխարհի» տարերքների նկարագրությունը «Աստծո գլուխգործոցում».

Լեռներն ալելի վեր բռնեցվեցին՝

Մեկը ճիմալալեց, մեկը մասիսվեց,

Ու մասիսվելով խուլ գեղեցկացավ ու վեր խոյացավ՝

Վշտով լեռնացած մեծ արարողի գլուխը դարձավ

Ու ոչ թե ձյունեց, այլ ձյուններն հերքն են հեգ արարողի...

Հույսն օազիսվեց անապատի մեջ,

Բայց մինչև այսօր վերքն անապատված այրվում է անշեջ։

Օվկիանոսների մեջ իր աստվածագող մոռնչն ամբողջվեց։

Այժմ անդրադառնանք Հովհ. Շիրազի պոեմներում առկա բայական-մական մի շարք ուղադրավ ձևերի։ Բանաստեղծի պոեմներում լայն գործածություն ունեն պարզ բայաձևերը, որոնք կազմվում են հնչյունափոխ կամ անհրնչյունափոխ արմատից և ել կամ ալ մասնիկից։ (Հովհ. Շիրազի պոեմներում ալ լծորդությամբ նորակազմություններ չկան)։ Գերակշռողը գոյականական արմատով կաղապարվածներն են, որոնցից կերտված բառերի մեծ մասը ներգործական սեռի է։ Բայականական այսպիսի ձևերը օրինաչափ, առ այսօր բառապաշարի հարստացման գործում միջոց են հայերենի համար։ Դրանք բնորոշ են մասնավորապես Հովհ. Շիրազի պոեմներին. օրինակ՝ ամբոստ+ել (2,56), բանակ+ել (2,203), գրահ+ել (2,247), թագ+ել (2,327), ժխոր+ել (2,57), կոկոն+ել (3,299), մոխ(ի)ր+ել (2,325), ն(ու)ո(ն)+ել (2,290), շատրվան+ել (2,292), պատանդ+ել (2, 184) և այլն։ Այսպիսի կառույցները հեղինակային նորակազմություններ են (որոնց մի մասը բառարաններում² գրանցված չէ) և արտացոլում են հայոց լեզվի բառապաշարի հարստացման մեծ հնարավորությունը. օրինակ՝ բուրդ+ել (2,327), բու(յ)ն+ել (2,288), գահ+ել (2,202), սատանա(յ)+ել (2,81), վազր+ել (3,253), վեմ+ել (2,327),

¹ Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 81։ Բնագրում օգտագործվում է նաև՝ Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 3, Երևան, 1984 (այսուհետև մեջբերումների հատորն ու էջերը կնշվեն տեքստին կից)։

² Քննվող բառերը համեմատված են հետևյալ բառարաններով՝ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1944—1955 (այսուհետև՝ ՄԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1969—1980 (այսուհետև՝ ԺՀԲԲ), է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, մաս 1—2, Երևան, 1970 (այսուհետև՝ ԱԲԲ)։

փյունիկ + ել (2,327) և այլն: Այսօրինակ բայերը հիմնականում տեքստային գործածություն ունեն և դասվում են պասիվ բառաշերտերի շարքը:

Լեզվաոճական տարողունակությամբ առանձնանում է Հայկ հատուկ անունից կերտված բայը: Այն գործածվում է փոխաբերական իմաստով՝ աղերսվելով Հայկ նահապետի անվանը (Հայկ-ել հայացնել, հայերին վերադարձնել): Դրկելով հոդն իմ բովանդակ՝ հայկեմ Անին ու նոր մեռնեմ (2,327): Ժողովրդախոսակցական բառաձևերից աչքի է ընկնում օջախել բայը, որը նորմավորված դրականի արժեք է ստանում՝ գործածվում է փոխաբերական իմաստով (օջախել-օջախում տեղ տալ, օջախում հաստատել):

— Իմ կարոտի թևավոր (աղավնի— Ս. Մ.), առ բյուրածալ սիրտս տար՝

Որտեղ մի հայ կգտնես՝ տուր իմ սրտից մի պատառ,

Որպես նամակն իմաստուն հայոց երկրի նորակերտ,

Հասիր պանդուխտ հայերին, հույսն օջախի երդե-երդ (2,272):

Սեղմ ու բովանդակալից է թվականից կերտված մեկ + ել հեղինակային նորակազմությունը՝ ծրկուսը մեկեց (2,29):

Հովհ. Շիրազի պոեմներում բուն բառակազմական ածանցներով բայերը սահմանափակ են և յուրահատուկ կիրառական արժեք չունեն՝ ան + թեղ + վ + ել (2,91), երկ (ու > վ) + (ա)վոր + (ե > յ) ակ + վ + ել (2,169), թագ + ավոր + ել (2,327), համա + (դ > ս) + փյուռ + վ + ել (2,291) և այլն: Հեղինակային նորակազմություն է գուր + ք + վ + ել (2,187) բայը: Տարբերվող իմաստային նրբերանգ ունի սա + ք + ել³ կառույցը (ռաբել— 1. զգուշորեն ոտքի տակ առնել, 2. անգիտակցորեն վնասել): Մրջյունին անգամ սոսկում էր ռաբել (2,74): Քերականական-բառակազմական բայածանցների երկու խմբերը՝ բաղադրական-քերականական և քերականական, լայն գործածություն ունեն բանաստեղծի պոեմներում:

ա) Բաղադրական-քերականական— ան-ածանցը բառակազմական, իմաստաբանական առանձնահատկություններ ունի: Այն համադրվելով ալ մասնիկին, բառակազմական երկրորդական բաղադրյալ ձևովի արժեք է ստանում՝ (—անալ) և կցվում գոյականին ու ածականին [մյուս խոսքի մասերին՝ հազվադեպ. դերանուն՝ ինքն + անալ (2, 30), մակբայ՝ մեռել + անալ (3, 203)]:

—Անալ բաղադրիչը հասարակ գոյականներին է համադրվում (բացառությամբ Լոխման + անալ ձևի)՝ և հիմնականում փոխաբերական իմաստով է գործածվում, որը նպաստում է խոսքի թարմությանն ու գեղարվեստական նկարագրության կատարելությանը: Օրինակ՝ աստված + անալ (2,47) -կատարյալ դառնալ, դյուցազ(ու)ն + անալ (2,283) -հզորանալ, դրախտ + անալ (3,197) -փարթամանալ, փթթուն ու կենսալից ձև ստանալ, ծով + անալ (2,11) -շատանալ, մարգար(ի)ա + անալ (2,300) -ազնիվ դառնալ, մաքուր, գեղեցիկ և հարգանքի արժանի լինել, մոխ(ի)ր + անալ (2,210) -ոչնչանալ, վարդ + անալ (2,62) -քնքշանալ, հաճելի դառնալ և այլն:

Զգալի տեղ են գրավում կենդանական աշխարհի անվանումներ հանդիսացող գոյական-բաղադրիչներով բայերը, որոնք, այլաբանորեն կիրառվելով, խտացնում ու դիպուկ են դարձնում նկարագրվող օբյեկտների՝ հատկապես անձերի, հուզարտահայտչական հատկանիշները: Օրինակ՝ վագր + անալ (3,242) -գազազել, շարուքյամբ լցվել, գայլ + անալ (2,158) -շարանալ (ի հակադրություն վագրի՝ քիչ շափով), աղվես + անալ (3,240) -խեղճանալով՝ խորամանկության դիմել գառ(ն) + անալ (2,158) -անմեղ, մեղմ, խեղճ, հու-հնազանդ լինել, աղավե(ի) + անալ (2,11) -բարի, ազնիվ, մտեղմացնող լինել, արծ(ի)վ + անալ (2,189) -հզորանալ (վերջին երկու ձևերը հեղինակային նորակերտություններ են): Այսպիսի արտահայտությունները յուրօրինակ արժեքավորում են ձևաբանական համատեքստում. ահա, օրինակ՝ գայլանալ և գառ-

3 Ոտքել -1. Ոտքով խփել, հարվածել, կոխոտել, 2. փխր. Ոտնահարել, արհամարհել (ԺՀԲԲ, 4, էջ 116, ԱԲԲ, էջ 1146):

նաեալ հատկանիշների ինքնատիպ իմաստային աստիճանավորված փոխկապակցվածությունը «Շղթաված մեղեդիներ» պոեմում (անգութ արքայի հոգեկան փոփոխությունները՝ հոգեպարար երաժշտության ներքո)։

Եվ ահա վազրը (արքան — Ս. Մ.) գայլացավ գութից,

Դայլն էլ՝ զառնացավ, մանուկի փոխվեց (2,158)։

Այսպիսի կաղապարներով սահմանափակ բայեր են հանգես գալիս ուղղակի իմաստով և տեքստից դուրս առանձին հետաքրքրություն չունեն. օրինակ՝ աստղ + անալ (3,343), լեռ(ն) + անալ (2,64), ձոր + անալ (2,68) և այլն։ Իսկ որոշ բայեր ունեն թե՛ ուղղակի և թե՛ փոխաբերական զուգահեռ գործածություններ. օրինակ՝ հաբս(ն) + անալ — 1. Չհաբսնաճափ շտարին... (2,275), 2. փխր. — բարիք տվող դառնալ՝ Ու նազում էին դաշտերն հաբսնացած (2,70), մառդ + անալ — 1. Որ թե մարդացուն իրավ մառդանա (2,80), 2. փխր. — ի հակադրություն գազանի՝ բանական, մարդկային դրական հատկանիշներ ձեռք բերել՝ Ով մարդ գազաններ, չեք տեսնի նրան, չեք մառդանալու, վայ ձեր ժանիքնին (2, 159)։ Ինչպես նշել ենք, հատուկ անուններից վերոհիշյալ կառուցվածքով միայն մեկ ձև կա՝ Լոխման + սեճալ (2,107) - ամենակարող, բուժող, ապեղանի դնող դառնալ (առասպելական Լոխման՝ Լողման արար բժշկի նման)։

Եվ այնպես իմաստունանում, որ թվում է, թե դու

Կարող էիր լոխմանաճալ՝ ջնջել մահն էլ մարդու (2,107)։

Հովհ. Շիրազի պոեմներում — անալ ձևությամբ կիրառված միավորները երբեմն արմատական ձևի «հարևանությամբ» են գործածվում, որտեղ կրկնությունը նպաստում է խոսքի, մտքի արտահայտչականությանը, օրինակ՝

Սուրբ սրբանա, որ չքանա սպիացած վերքդ հին (2,303)։

Իր մահով էլ չմահանա մարդն այս անմահ աշխարհում (2,304)։

Բ) Թեև պատճառական ածանցով բայերը ոճական լայն կիրառություն չունեն, բայց որոշ բայեր հանգավորման նպատակով գրաբարյան և ժողովրդականացական ձևերի խառնուրդով ստեղծում են հնչյունական-տաղանթական որոշակի տպավորություն։ Ահա «Ձևսի ծաղիկը» պոեմի՝ անմահություն փնտրող արքայի խոսքը՝ ուղղված բնությանը.

Մահը մահացու,

Մեզ հավերժացու,

Ոչ թե անունով ինչ-որ ընդունայն,

Այլ հավերժ հոսքով իմ սրտի արյան։

Ինձ պարմանացու, ինչպես տաղերս (2,122)։

Հովհ. Շիրազի պոեմներում ուղադրության արժանի կիրառություն ունեն — վ կրավորական ածանցով բայաձևերը, հատկապես կրավորաձև չեղքները, որոնք ըստ գործածության հաճախականության, գերիշխում են։ Այդպիսի կառույցները շրջապատի անմիջական ու խոր զգացողության, նուրբ ընկալման, սեղմ ու դիպուկ նկարագրման արտահայտություններ են, որոնք վկայում են մեծ բանաստեղծի ինքնատիպ մտածողության ու բառաստեղծական յուրօրինակ կարողությունների մասին։ — Վ ածանցը, ձուլվելով — ել երկակի արժեք ասանցող ձևությամբ, ակտիվորեն մասնակցում է նորակազմություններին, ձեռք բերում բուն բառակազմական երկրորդական ձևությամբ արժեք։ Այն հիմնականում գոյականներից է բայաձևեր կերտում։ Գոյական հիմքից կերտված բայաձևերում գերիշխում են հասարակ անուններից կազմվածները, որոնք կիրառվում են թե՛ ուղղակի և թե՛ փոխաբերական իմաստներով. օրինակ՝ աղամանդ + վել (2,192), անապատ + վել (2,170), արմատ + վել (2,29), դամբան + վել (2,173), կանթեղ + վել (2,170), հեթանոս + վել (2,200) և այլն։ Նշանակալից են այդպիսի կառուցվածքով հեղինակային նորակազմությունները, որոնք սեղմ ու դիպուկ ընդհանրացումների արժեք ունեն. օրինակ՝ արար + վել (2,217), գավաթ + վել (2, 301), երինջ + վել (3,224), լեռ(ն) + վել (3,331), հորիզոն + վել (2,288), նարդոս + վել (2,217), պուրակ + վել (2,222), սփյուռք +

⁴ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 4, Երևան, 1978, էջ 654։

վել (2,334), բալիկ+վել (2,303), լեզվակ+վել (2,334), նախամարդ+վել (2,281), տիեզերք+վել (2,305) և այլն:

Այս բնագավառում Հովհ. Շիրազի բառաստեղծական մեծ կարողությունների փառքն ու պսակն են կազմում հատուկ անուններից կազմվածները, որոնք մրցակից չունեն: Այդ բառերը հիմնականում հայ իրականության հետ առնչվող հատուկ անուններից են կերտվում [մյուսները սահմանափակ են՝ Հիմալայ+վել (2,81), Լոխման+վել (2,283)]: Սակայն հեղինակը փոխաբերական այնպիսի տարողունակ իմաստներով է գործածում դրանք, որ վերջիններս ընդհանրական նշանակություն են ձեռք բերում. օրինակ՝ Անդրանիկ+վել (2,284)-հերոսանալ, Ավարայր+վել (2,163) -ճակատագրական պայքարի արժեք և տանալ, Արարատ+վել (2,172), Արագած+վել (2,286), Մասիս+վել (2,105) -հավերժանալ, ահագնանալ, Արագ+վել (2,290) -վարարել, Մաշտոց+վել (2,286) -սրբանալ, պաշտամունքի, երկրպագության արժանանալ և այլն: Այսպիսի բառերն ընդհանրապես դրական հատկանիշներով են հանդես գալիս, բայց չեն բացառվում նաև բացասական հատկանիշներ պարունակող անձնանուններից ստացվածները, որոնք մարդկային արգահատելի հատկանիշները մերժող մթնոլորտ են ստեղծում. օրինակ՝ Շամիրամ+վել (3,333) -սիրո բնագավառում՝ քնքուշ նվիրվածության փոխարեն իշխողական տհաճ դիրք գրավող դառնալ, Մեհուժան+վել (2,210), Վասակ+վել (2,222), Քոսակ+վել (2,244) -հայրենիքին դավաճանողներ դառնալ:

Ուղղակի իմաստով Հունաստան+վել (2,28) բառն է գործածվում, որը հույն ժողովրդի կազմավորման լեգենդային պատմությունն է բնորոշում «Բիր-լիականի Լրկորդդ պոեմում»:

Եվ դարը դարին սա էլ գեղեցիկ մի նոր ցեղ դառավ,

Եվ հունաստանվեց մայր իմաստությամբ իր աստվածագեղ,

Նարգիզ ծաղկաբույր ու գեղադայլալ լեզվով իր շքեղ (2,28):

Վ բայական-քերականական ածանցը, համադրվելով -ալուր+ել բառակազմական ձևով՝ ծնունդ է առնում: Օրինակ՝ լեզ(ուլլ)+ալորվել (2,21) ձի+ալորվել (2,213), շ(ու)նչ+ալորվել (2,53), ջահ+ալորվել (2,275), ցեղ+ալորվել (2,21) և այլն: Իսկ բուն ժողովրդախոսակցական բայերը սահմանափակ են՝ ջուխտակ+վել (2,287), մուրազ+վել (2,343): Փոխառյալ բառերից կազմված ներքին հանգավորումով հեղինակային մեկ նորակերտություն կա «Սիամանթո և Էրեզարե» պոեմում՝ աշիրաթ(աշիրեթ)+վել, որը տեքստից դուրս արժեք չունի:

Նույն էին ընկել զինված խուլամները վայրենի,

Ջարեհ բեկին աշիրաթված անգղները ձիավոր (3,220):

Մյուս խոսքի մասերից կազմվածները սահմանափակ են. ածականից՝ անառիկ+վել (2,224), դժբախտ+վել (2,202), հավերժ+վել (2,172), նոր+վել (2,289), թվականից՝ մեկ+վել (2,105):

Ընդհանրապես Վ բաղադրիչի պստրոնակությամբ բայաձևերի կուտակումները ստեղծում են նաև բաղաձայնությի ու գեղեցիկ հանգավորումների ներդաշնակություններ (ֆավել-դավել-մատնաբոսոցֆավել-միաբանվել (2,190), աղեղվել-հեղեղվել-գինվել-ապեղանվել (2,195) և այլն). օրինակ՝

Դուրս մղվեցին ու թաղվեցին նվաճողի իդձերը սև...

Հայոց գրով անշեղվելով՝ հայ դպրության կանթեղվելով,

Դարակուտակ աղետների մոխրի մեջ էլ անթեղվելով... (2,171):

Հովհ. Շիրազի պոեմներում, ըստ հիմնական ձևովների քանակի, սովորաբար գործածվում են երկանդամ բայական բարդություններ: Համադրական կառույցներում հոդակապով իսկական բարդությունները, ըստ գործածության հաճախականության, առաջին տեղն են գրավում, իսկ անիսկական կցական բարդությունները՝ վերջին: Հոդակապով բարդությունները սովորական հիմունքներով են կազմվում. ձայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչը առանց հոդակապի է միանում, ինչպես՝ օրհնեցեղ (2,222), ողբեցեղ (3,277) և այլն: Բա-

ցառություն է բազմառափել (2,305) բայը, իսկ բաղաձայնով սկսվող բաղադրիչը հոդակապ է ստանում՝ մարդացեղվել (2,34), ծնրաթողել (2,84) և այլն: Սահմանափակ թվով բայեր անհոդակապ են՝ բուրվառել (2,35), լողվել (3,228): Նման ձևերն, իհարկե, բարեհնչուն են:

Մեծ բանաստեղծի պոեմներում գործածված համագրական բարդությունների բաղադրիչները հիմնականում գոյական+բայ կաղապարով են դրսևորվում (մնացած ձևերը սահմանափակ են), իսկ դրանց շարահյուսական հարաբերություններում գերակշռում են ստորոգյալ+խնդիր (հատկապես միջոցի անուղղակի խնդիր), ստորոգյալ+պարագա (հատկապես ձևի պարագա) հարաբերությունները:

Մեկից ավելի հիմնական ձևույթներով համագրական բարդությունները իրենց տարողունակ իմաստներով խոսքը ավելի պատկերավոր ու հակիրճ են դարձնում: Հեղինակային այսպիսի նորակազմությունները Հովհ. Շիրազի լեզվի ու ոճի ձևավորման ուշագրավ կողմերից են: Օրինակ՝ աղոթք+ա+խոսել (2,141), բազ(ու)մ+ա+ոտք+վ+ել (2,305), բազ(ու)մ+ա+խոսել (2,21), բյուր+ա+բերդ+վ+ել (2,305), դառ(ն)ա+ա+խ(ու)ռն+վ+ել (2,24), խաշ+ա+փառ+վ+ել (2,194), մեղս+ա+գործել (2,73), մարդ+ա+ցեղ+վ+ել (2,34), մատ(ն)ա+ա+բռնեց+վ+ել (2,190), վ(ի)շտ+ամպ+ել (2,195) և այլն: Կազմությամբ բարդ հատուկ անվամբ բաղադրված միայն մի բայաձև կա՝ Տիգրան+ա+կերտ+ել (2,200), որը հեղինակային նորակազմություն է:

Որոշ բայաձևերի միաձևույթ և կրկնաձևույթ (հիմնական ձևույթ) կառույցները իմաստային տարբերություններ համարյա չունեն. օրինակ՝ խնկարկել|| խնկել:

Որդու հորը վաճառե-վանք խնկարկեցեք ծնկաչոք,

Աճյունը վեր կթաղեք Արագածի լանջերին,

Ինչպես խնկում էր ինքը իր երկվորյակ քաջերին (2,222):

«Դողալ||գողգողալ» օրինակում կրկնության սաստկականությունը աննշան է.

Այժմ ոչ թե փողփողում,

Այլ դողում էր, դողդողում (2,214):

Հետաքրքիր լեզվաոճական կիրառություն ունեն նաև հարադրական բարդությունները, որոնց իմաստային նրբերանգները թե՛ հուզարտահայտչական և թե՛ նկարագրական ծավալուն պատկերներ են ստեղծում: Այդպիսի ձևերը հիմնականում ժողովրդախոսակցական լեզվաշերտերից են վերցված և, ինչպես բոլոր գրողները, Հովհ. Շիրազը նույնպես դրանց միշտ նախապատվություն է տվել: Նա առանձնապես գործածում է այնպիսի բայական հարադրություններ, որոնք կազմված են գոյականից ու բայից և իրենց փոխաբերական իմաստներով աղերսվում են դարձվածքներին: Դրանք խոսքին տալիս են ժողովրդայնության շեշտված երանգ, հաճախ նաև ազգային կոլորիտ. օրինակ՝ աշխարհ բերել (2,54), շունչ տալ (2,46), գլուխ չհանել (2,55), ահ առնել (2,60), դեղին կտուցը հանել (2,69), կույր աչքը բացվել (2,91), կյանք մտնել (2,71), ձեռ քաշել (2,74), թև տալ (2,74), կամուրջ կապել (2,104), ականջին հասնել (2, 106), ոտ դնել (2,106), սիրտը բացել (2,106) և այլն:

Վեր բաղադրիչով ուշադրության արժանի մի շարք հարադրություններ կան գործածված վեր քաղադրել (2,203), վեր առնումվել (3,232), վեր փյուռիկել (2,327), վեր աշառնակվել (2,308) և այլն: Բանաստեղծը հաճախ է գործածում նաև բաղահյուսական-զուգահրական բայեր, որոնք կազմվում են բայ+բայ կաղապարով, ուր հակադրվելու, համադրվելու, շարունակվելու, փոխհաջորդելու աստիճանավորումները հնչել ու գունեղ հատկանիշներով են շղարշում միտքը՝ գոցվել-բացվել (2,30), գրկել-շոյել (2,260), գալ-գնալ (3,244), ելնել-կորչել (3,273), ելնել-իջնել (3,310), թռչել-կորչել (3,205), հանել-ապրել (2,63), հալվել-ձուլվել (2,157), հասնել-զարկել (3,269), ճշալմոնչալ (2,19), մեռնել-կորչել (2, 94), մեռնել-շթաղվել (2,330), ցուլալ-բնկնել (3,210), փախչել-կորչել (3,297), քաղել-փորձել (2,122) և այլն: Մի քանի

ձևեր համարյա քարացած բնույթ են կրում, ինչպես՝ *Խուսին առնես՝ վառվող-ծխացող թոնրի բերանը բանաս* (2,25), *Որ ուզեն-չուզեն՝ անբաժան լինեն* (2,53), *Մակընթացող-աեղաավազ ծով ես* (2,105) և այլն:

Հարադրական ձևերն ունեն նաև իրենց համադրական զուգահեռները, որոնք արտացոլում են հայերենի բառակազմական անսպառ հնարավորություններն ու հոմանշային հարստությունները: Համադրական ձևերում ընթացականությունը շատ ղգալի է, իսկ վերլուծականում այն թուլանում է, և դինամիկ, փոփոխական հատկանիշը կտրուկ, շրջադարձային է դառնում: Այդպիսի զուգահեռներում հարադրություններին հոմանիշ են տարբեր կազմությամբ համադրական բայերը.

1. Հարադրություններ և մեկ արմատով կազմված համադրություններ՝ *ծնունդ տալ* (2,38), *աշխարհ բերել* (2,125), *լույս աշխարհ հանել* (2,37)–*ծնել* (2,38), *ծափ տալ* (3,232)–*ծափել* (3,232), *ծիածան կապել* (2,289)–*ծիածանել* (2,262), *ձայն տալ* (2,206), *ձայնը գցել* (2,239)–*ձայնել* (2,221), *կայծակին տալ* (2, 257)–*կայծակել* (2,42) և այլն:

2. Հարադրություններ և՛ առաջադրական- քերականական ածանցով համադրական կառույցներ՝ *աստված դառնալ* (2,301)–*աստվածանալ* (2,47), *նոյյան աղավնի դառնալ* (2,163)–*աղավնանալ* (2,112), *արքա դառնալ* (2,11)–*արքայանալ* (2,221), *արծիվ դառնալ* (3,269)–*արծվանալ* (2,257), *ծով դառնալ* (2,168)–*ծովանալ* (2,161), *մարդ դառնալ* (2,190)–*մարդանալ* (2,22), *վարդ դառնալ* (2,64)–*վարդանալ* (2,64) և այլն:

3. Հարադրություններ և՛ վ ածանցով համադրական զուգահեռ կառույցներ՝ *անտառ դառնալ* (2,302)–*անտառվել* (2,278), *դայակ դառնալ* (2,13), *դայակվել* (2,291), *ծիածան կապել* (2,273)–*ծիածանվել* (2,22), *օրոց դառնալ* (2,302)–*օրոցվել* (2,281) և այլն:

Այսպիսով՝ Հովհ. Շիրազի պոեմներում գործածված բայակազմական տարբեր ձևերը հենվում են հայոց լեզվի բառակազմական-քերականական ծավալուն միջոցների վրա, ձեռք բերում իմաստային նոր ու նուրբ երանգներ, որոնք ստեղծում են ոճական արտահայտչական տարողունակ հնարավորություններ: Առանձնապես արժեքավոր են՝ վ ածանցով և հատուկ անունով բաղադրված նորակազմ բայերն ու ժողովրդական շերտից եկող հարադրությունները, որոնք նպաստել են բանաստեղծի լեզվի ժողովրդայնությանը, երկերի տճական ինքնատիպությանը, գեղարվեստական բարձր մակարդակին:

ОТГЛАГОЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ В ПОЭМАХ ОВАНЕСА ШИРАЗА

СИЛЬВА МИНАСЯН

Резюме

В поэмах Ов. Шираза встречаются почти все отглагольные типы армянского языка. В простых формах глагола, носящих условные названия, преобладают те, которые состоят из корней существительных, где собственные имена имеют одну форму (*Հայկ+ել*). В производных глагольных формах грамматические словообразовательные суффиксы часто принимают участие при образовании глагольных новообразованиях. В основном получают метафорический смысл те формы, которые производны от собственных имен (*Լոխման+անալ*, *Ավարայր+վել*) и т. д.

В составных глагольных формах (часть которых—новообразования) преобладает форма с составными частями: существительное+глагол. И простые, и производные синтетические и аналитические глагольные формы имеют параллельные аналитические применения (*ձայնել||ձայն տալ*, *աղավնանալ||նոյյան աղավնի դառնալ*, *դայակվել||դայակ դառնալ*).